# ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

## ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆ

*Նրա քառասնամեայ յօբելեանի առիթով*

Անցեալ մայիս ամսի 16-ին Թիֆլիսում տօնուեց պ. Պ. Պռօշեանի գրականական գործունէութեան քառասնամեակը։ Հայ հասարակութիւնը սրանով ցոյց տուեց, որ գիտէ գնահատել իւր գրական արդիւնաւէտ մշակին, և ապահովացնել նրան ծերութեան հասակում։ Պ. Պռօշեան բազմաթիւ ուղղերձներից, շնորհաւորական նամակներից և հեռագիրներից զատ ստացաւ նաև մօտ 9000 րուբլի նուէր։



Պ. Պռօշեան իւր քառասնամեայ գրական գործունէութեան ընթացքում, զգալի օգուտ է տուել առաւելապէս հայ ազգագրութեան։ Հետևելով իւր անզուգական ուսուցիչ Խ. Աբովեանին, նա իւր բազմաթիւ վէպերի մէջ աշխատել է լուսանկարել հայ գեղջկականութիւնը իւր բոլոր առանձնայատկութեամբ և ամենայն մանրամասնութեամբ։

Նրա «Սօս և Վարդիթերը», «Կռուածաղիկը» և միւս վէպերը մի ամբողջական, կատարեալ պատկեր են տալիս Աշտարակ գիւղի։ Այստեղ րէալական ճըշտութեամբ դուրս են բերուած հայ գիւղացիների գրեթէ բոլոր տիպերը, —գիւղացին, տէր-տէրը, վաշխա-

ռուն, երիտասարդը, գեղջկուհին, և այն, այստեղ կայ հարսանիքի, ընտանեկան կեանքի, Թաղման, Նշանաւոր տօների, պարապմունքի, նիստ ու կացի և այն նկարագրութիւնը. մոռացուած չէ նաև բազմաթիւ նախապաշարմունքները, աւանդութիւնները, ժողովրդական երգերը և այն։ Մի խօսքով այստեղ նկարուած է կեանքը իւր բոլոր մանրամասնութիւններով, իւր լաւ ու վատ կողմերով։

Այսպիսով վէպը պ. Պռօշեանի համար իբր միջոց է ծառայել հայ ազգագրութեան վերաբերեալ նիւթեր տալու, ուստի և տեղ տեղ նա մեղանչել է վիպական գեղարուեստի դէմ, առաջ բերելով գիւղացիների երկար ու ձանձրացուցիչ խօսակցութիւններ, զանազան, անմիջական կապ չունեցող ծէսերի և նախապաշարմունքների նկարագրութիւններ և այն։

Միւս կողմից հայ ազգագրութիւնն էլ մասամբ վնասուել է, որովհետև նիւթերը ոչ թէ մի որոշ սիստեմով դասակարգուած և պարզաբանուած են, այլ յարմարեցնելով վէպի պահանջներին, ցրուել և տեղ տեղ բանաստեղծական գոյն են ստացել, որով և կորցրել են իրենց բուն, գիտական նշանակութիւնը։

Արդ՝ առանց նուազեցնելու պ. Պռօշեանի այս բեղմնաւոր գործունէութեան մասնաւորապէս հայ ազգագրութեան համար ունեցած մեծ արժէքը՝ անհրաժեշտ ենք համարում նրա բոլոր վէպերի միջից հանել ազգագրութեան վերաբերեալ բոլոր նիւթերը և նրանց որոշ սիստեմով դասակարգելով հրատարակել։ Այն ժամանակ հայ ազգագրութիւնը կը հարստանայ և մի աշխատութեամբ, որ գիտական նշանակութիւն կունենայ։

Այս գեղեցիկ գործը մենք խընդրում ենք կատարել իրեն, յարգելի վիպասան-ազգագրագէտին, որովհետև նա միայն կարող է լրացնել իւր աշխատութիւնը այն բոլոր մանրամասնութիւններով, ինչ որ վէպի պահանջները թոյլ չեն տուել մըտցնելու իւր գրուածքների մէջ։

Ե. Լ.

---

Հրատարակիչ՝ Երուանդ Լալայեան